մարդոյ, իւրաքանչիւր անձամբ բարկացեալ ընդ դէմ ընդդիմակաց իւրոց եթէ արու և եթէ էգ, ոչ ոք խառնեսցի ընդ մէջ նոցայ, եթէ երկու բարկացեալք դաշնադրեսցեն ընդ միմեանց եթէ սրով եթէ փայտիւ կարող են արձակել 'ի վերայ միմեանց և խնդրել վրէժ մինչև ցը մերձ 'ի մահ, 'ի այսպիսի յանձանց վիրաւորեալն և ոսկերս փշրեցեալն ակն և ատամն աւերեալն մի լինիցի տեղի զանդատելոյ 'ի դատաստանի, և ոչ ոք դատաւոր վրէժխնդիր մի լինիցի, վասն զի ըստ կամաւ և յօժարութեամբն իւր 'ի վերայ իւր յանձն էառ, այլ եթէ գոցի մեռեալ՝ սպանողն նորայ մահու մեռցի։

ԳԼՈՒԽ ՆՂԶ.

Մահապարան եթէ գոցի էկլէզիաստիկ աստիճանաւորէ, մինչև վարդապետ, յանձնեսցեն եպիսկոպոսին իւրոյ, և եպիսկոպոսն յանձնեսցէ հայրապետին տանն հայոց, վճռաւն մահու նորա, և նոքա անելուոյթ արասցեն մահապարտն, ըստ սովորութեան էկլէզիաստիկաց, յետ կատարելոյ այսպիսի յանձնարարութեան, եթէ մահապարտն այն կրկին երևեսցի 'ի յերեսս երկրի 'ի տեսակս որ ոք առն պարտ է ըմբռնել նմա և մուծանել առ ատենի դատաւորի՝ հաստատելով առն այն մահապարտ յանձնեցեալ Տեառն իւրոյ վասն մեռելոց և եկաց խկոյն մեռցի։